Անդրկովկասում հարստանում էր առավելապես ազնվական և մասամբ հոգևորական, շատ սակավ դեպքերում արհեստավորական և առևտրական շարքերի և գրեթե բոլորովին ոչ գյուղացիական խավերի զավակներով։ Այսպես էր մինչև XIX դ. 60-ական թվականների վերջերը և 70-ական թվերի կեսերը։ Նույնն էր և Զանգեզուրի գավառապետության մեջ։ Ավելի ուշ, միայն 60-ական թթ. գյուղացիական և հասարակական ռեֆորմներից հետո, այդ ինտելիգենցիայի շարքերում ավելի և ավելի հաճախ սկսեցին պատահել ոչ ազնվական կամ հոգևորական, այլ ուրիշ խավին պատկանող անհատներ, նաև հարուստ գյուղացիական շերտից դուրս եկածները։

Ուրիշ հասարակական շերտերի համեմատությամբ Զանգեզուրում հոգևորականությունն է, որը մինչև հեղափոխության սկզբները ավելի անխախտ էր պահում խոր հնությամբ սրբագործված իր կազմակերպվածությունը։ Մյուս կողմից ռուսական տիրապետության հաստատման օրից ուրիշ դասակարգերի համեմատությամբ նա ուներ ավելի ռեալ հնարավորություններ և այդ հնարավորությունները կարող էր տալ նաև այլ խավերին իր զավակներին դպրոցական ցանցի միջոցով անցկացնելու և նոր քաղաքական ու տնտեսական պայմաններում հետզհետե լարվող գոյության պայքարի մեջ նոր և նոր դիրքեր գրավելու։ Այդպիսի դպրոցական հաստատությունների մեջ կարևորագույն նշանակություն ստացավ Շուշու թեմական դպրոցը, որի նպատակներից առաջինն էր պատրաստել կրթված հոգևորականներ։ Այդ դպրոցում սովորում էին ոչ միայն հոգևորականների, այլև ուրիշ դասերի տղաները, որոնցից մեծագույն մասը սակայն խույս էր տալիս հոգևորական դառնալուց և գերադասում էր անցնել այլ ասպարեզներ, մասնավորապես նոր բացվող պետական հիմնարկների պաշտոնեության շարքերը։

Ռուսական տիրապետության հաստատման միջոցին Զանգեզուրի հայ լուսավորչական հոգևորականությունը ենթարկվում էր Տաթևի վանահոր առաջնորդությանը, որը Ղարաբաղի խանության սահմաններում շատ ավելի նվաստ դեր էր խաղում, քան թե Գանձասարում նստող Աղվանից կոչվող կաթողիկոսը։ Վանքի միաբանությունը վաղուց դադարել էր հյուսիս-արևելյան Հայության համար այն գլխավոր մտավոր կենտրոնը լինելուց, որը նա էր XIV դ. և մանավանդ XV դ., երբ նրա աշակերտներն էին ոգևորում և ղեկավարում էջմիածնի հայրապետության վերականգնման շուրջը ծավալված շարժումը[45]։ XVIII դ. վերջերին Տաթևի վանքի ընդարձակ կալվածքներից միայն չնչին մասն էր պահպանված, բայց նա շարունակում էր իր պատերի մեջ ապաստան տալ մերձավոր գյուղերի բնակիչներին Պարսկաստանից և Նախիջևանի խանությունից հանկարծակի ներխուժող ավազակային հրոսակների թալանից և սպանություններից։ Տաթևի միաբանությունն էլ Գանձասարի կաթողիկոսության պես աչքի էր ընկնում իր ռուսական կողմնորոշմամբ։ 1796 թ. Աղա-Մահմադ խանի արշավանքի միջոցին վանքը ենթարկվեց կողոպուտի և միաբանությունը սկսեց ցրվել։ Միայն այն ժամանակ, երբ Ղարաբաղի խանությունը մտավ ռուսական կայսեր հովանավորության ներքո (1805 թ.), միաբանությունը նորից սկսեց հավաքվել, իսկ խանության վերացվելուց հետո Երմոլով[46] կառավարչապետի օգնությամբ ետ ստացավ իր կորցրած կալ-

---

[45] Տաթևի վանքի մասին տե՛ս Ալիշան Ղ., Սիսական, էջ 222 և Լալայեան Ե., Սիսիան, էջ 39 և հաջ.։

[46] Նույն տեղում, էջ 15—16։